քանիլեաս մանգթանոք սարա[illegible]
[illegible] խոր նդրեսյաւք զթողու-
թի մեղաց։



Նոյն ոտնոյն բնաւոց ապաշխարհաւ ձայնին

տաղ։ 39

ՍԻՐՏ զօրաւոր՝ յաղթող վրէկոյ՝ երրորդութեան անձնըլման. խոստովանող՝ անձն յոյն սրտի և քաջ՝ պատուա՛կան. ընտրեալ բարի՝ հաւա՛տարիմ՝ որ նահատակ՝ զօրական. ո՛վ մեր մնաս՝ քաղցրաբարբառ՝ արագահաս՝ օգնական։



Ի

Ի խնդրողաց՝ միշտ զօրավիգ՝ հզ
զօրապէս՝ մերձակայ. դու նե-
ղելոց՝ իսկ ձեռնտու՝ և բարե-
խօս՝ յարակայ. ՚ի յա̃մ՝ վշտաց
բազմաց՝ քեզ աղերսեմք՝ զ°մեզ
փրկեա. ո՛վ տ̃ր մինաս՝ գերազան-
ցեալ՝ տ̃ն սիրելի ծառայ։
Նահատակ քաջ՝ արիական՝ զին-
ւոր զօրեղ՝ զօրացեալ. անուն
քո տ̃ր՝ յոյժ գերապանծ՝ փա-
ռօք փառաւո̃րեցեալ. զարմանա-
լի՝ հրաշիւք լցեալ՝ դու զմե-
ռեալս՝ յարուցել. ո՛վ տ̃ր մինաս՝
հզօր վանօղ՝ գունդըս դիւաց՝
զարհուրեալ։
Հեղարկու՝ զօրեղապէս՝ միշտ
ախոյեան՝ դու դիւաց. զկո-
րուսեալսն՝ իսկ գտանօղ՝ արա-
գահաս՝ լեալ վշտաց. միշտ հա-

սանիս՝ 'ի նեղութեան՝ զոր 'ի մարդ-
կան՛ցըն բազմաց. հաս եղկել-
ւոյս՝ կամ վշտացեալ՝ ահա զո-
չեմ՝ 'ի բարձանց.

Տէրդ մինաս՝ զինուոր արի՝ միշտ
քաջազօր՝ դու վըկայ. առ բանն
ած՝ գոլով միջնորդ՝ արի զոչեմ՝
աղաչեմ. ահա խնդրէ՝ անուա-
նակիցդ՝ առ 'ի լինել՝ հաւատչէյ.
փառաց լուսոյն՝ աներեկոյ՝ առ
քեզ զոչէ՝ միշտ մաղթեմ.

Սուրբ վըկայ քո՝ քաղցրաբար բկ
բառըրդ մինաս. արագահաս օգ-
նական յուսով ըզքեզ խնդրո-
ղաց.

Լ․Ր․Գ — ԳԻՒՏՆ ձա․ 40

Սէր անուն յա՛ Միածին. ծնունդ հօր ծոցոյ՝ հայրածին. անմահ փե՛սայդ՝ եկեղեցւոյ. բարեբանեալ ըզ.քեզ փրկիչ Քրի.
երգեմք ալէլուիայ։

Լոյս փառացըդ հօր՝ Ճառագայթ. որ կամա՛՝ յանձն առեր ըզ խաչն. վա՛ մեր մահու համբերե
ցեր. բարեբա՛՛։

Փրկութիւնդ արարածոց. որ Թաղեցար՝ 'ի սիրտ երկրի. կ՛քեցար
վիմով՝ գերեզմանի. բա՛՛։

Սենարար փրկիչ՝ կեցուցիչ. Քր յարութե՛դ լուծեր զ՛կապ մահու. մերոյս նախաստեղծին ա-



դա-

դամայ․ բարեբանեալ ըզ՛՛։
Ճանապարհ բարի՝ շառաւիղ․
շնորհատու փրկիչ բոլորից․ ո-
ղորմեա՝ արքայդ երկնաւոր․
բարեբանեալ ըզ՛՛։

Որ յաջմէ փառաց՝ ածու- դձ
թեանն՝ դողան զուար-
թունք երկնից․ ընդ նմա անդա-
դար՝ օրհնեցէք բարձր ա-
րարէք ընդ նմա՝ յաւիտեան։



Անհուն անհաս՝ անճառե լի.
է գերաբուն՝ անքննե լի.
ներգործական՝ միշտ գոյութի.
յորում նոյն է՝ և էու թի:

## Նախադասութիւն ՚ի վրայ անճառելի Էութեան
Աղ. 41

ԱՆՊԱՐԱ գիր՝ անեղ անհաս՝ լոյս գերազանց՝ միութի. անճառ խորհրդով՝ միաս
գոլով՝ ունի զերիս՝ էակութի. ա Ծննդ
րար ըզմարդն՝ ըստ պատկերի՝ և 1. 26
առ իւրում՝ նմանութի. ՚ի չգոյէ՝ Կորն 11. 7:
Կողս 3. 10

էած 'ի գոյ՝ զհանուրց եղեալքս՝
էութիւն ։

Ամենազօր՝ բնաւ՛ից հաստիչ՝ ա-նեղական՝ գոյութ̃ի. ունի համայն՝ եղականաց՝ իշխանական՝ զօրութ̃ի. յորմէ սարսին՝ և զարհու-րին՝ հոյլք եղելոց՝ բնութ̃ի. և երկուցեալ՝ միշտ սասանին՝ գու-
մարք դիւ՛ացն՝ էութ̃ի ։

Ինքն է անշարժ՝ շարժէ զհա-նուրս՝ նըմա յաւ՛էտ՝ գովութ̃ի. ընդ ծագս և ծայրս՝ ծաւ՛ալե-ցեալ՝ ճառագայթէ՛ զզօրութ̃ի. երրեակութ̃ին՝ անբաժ գոլով՝ ո-րոյ սկիզբն՝ միութ̃ի. 'ի նմա այսպ̃ս՝ հաւ՛աստացեալքս՝ մատուցանեմք՝
զօրհնութիւն ։

Որ 'ի մ̃քրս՝ հանգուցեալ է՝ միշտ յաւ՛իտեան՝ մ̃ք գոլով. երեք սըր-

բեան՝ ձայնիւ գովեն՝ ո̅ր սերո-
բէքն՝ օրհնելով. և ք̅զ՝ զօրք երկ
նայնոց՝ երկրպագեն՝ գոչելով.
ո̅ր սրբութեց՝ ամենա̅բ՝ միշտ ան
դադար՝ ասելով:

Անժամանակ՝ անճառելի՝ անեզր
անփակ՝ զօրութի̅. անսկիզբն է՝ և
անվախճան՝ ամենաբա՛՝ իսկութի̅.
շնորհիւն իւրով՝ իսկ զարդա-
ցոյց՝ ըզմարդկայինս՝ բնութի̅.
անտես չաւներ՝ ըզմեղուցելքս՝
եդ 'ի վ̅ր՝ փրկութի̅:

Ամենադէտ՝ և մարդասէր՝ ինքըն
յինքեան՝ տէրութի̅. որ է պա-
ճառ՝ համրէց էից՝ մշտահա-
րուստ՝ զօրութի̅. որք օրհնելով՝
յա̅մ ժամ՝ մատուցանեն՝ գոհու-
թի̅. մեք ընդ նոսին՝ երդակցե-
լով տամք միշտ նմա՝ զօրհնութի̅

 Ան-

դձ Մ՛նժամանամ կդ ա՛ր՝ծ անըսկեմ զըն
և մ՛նձմ՛ռեմ լի. մ՛նստեմ ս սրբե-
մ՛ց. որ մեշտ ընդ հօր օրհ՝ն-
բան խ՛նիմ և ՚ի յանըմմ՛մ հիմ ց.
զդ մնատոմ՛ցեալ օրհ՝նմբ՛նիմ չ.ք
եղ՛մ՛ք. ո՛րդի՛ս աստ՛ւծո՛յ մ-
զո՛րըմեմ:

Մ. — Բերկեր՝ թ. : 42

Սէր առաւօտու քո.
ըզ սէր սիրոյդ՝ ցօղեա
յիս. առ քո բազում
գթութեղ:

Սէր անուն յո՛ փրկիչ. ըզգութ
սիրոյդ՝ ծագեա՛ յիս. առ քո
բազում գըթութեղ:

Ղադօղ խոկ յառաւօտէ. յիս
փայլեցո՛ զսէր սիրոյդ. առ քո

 բա

բազում գըթութեանդ ։

Արեգակն արդարութեան. լուսա-
ւորեա՛ լուսով քով. առ քո բա-
զում գըթութեանդ ։

Արփի փայլեալ ՚ի լուսոյ. ինձ ո-
ղորմեա՛ հանապազ. առ քո բա-
զում գըթութեանդ ։

Փեսայդ անմահ եկեղեցւոյ. ըն-
կա՛լ զհայցուածս խղճալւոյդ.
առ քո բազում գըթութեանդ ։

Արթուն բնութիւն յոյս և կեանք.
խնայեա՛ յես՝ գալստեանդ. առ
քո բազում գըթութեանդ ։

Օ՛րհնե՛մք ըզքե՛զ Աստուած՝ ընդ՛ ա՛ն- բձ
մա՛րմնո՛ցըն դասուց՝ ո՛ր ՚ի՛ բար-
ձո՛ւնս ես բնակեալ խնա՛յեա՛
՚ի՛ քո՛ յարարա՛ծս ։







ՀՕՐԻՆ բարձրելոյ՝ յաւէտ գովեալ. օթեւան ս՟բ Հոգւոյն՝ միշտ յարդարեցել. բնակարան միածնին՝ դու մաքրափայլեալ. տիրուհի Թագուհի երկնային՝ լե՛ր միջնորդ որդին. վս՟ ահեղ ատենին փրկելոյ՝ ի ան շէջ հրոյն։

Գերազանց կշռուն՝ ընուն երկրային. քերոբէ երկնաւոր՝ գար

մէ մարդկային. շնորհալոյս մար
գարիտ՝ բերմանց ծովային. տի՛՛:
Լուսէից յոգնաթիւ՝ մատուցք
բերկրութեց. ՚ի համայն ազգակ-
ցաց՝ արմատդ օրհնութեց. Ծա
ծանչեղ լուսափայլ՝ շողեալ խո-
րութեց. տիրուհի Թա՛:
Ինիւթոյ երկրաւոր՝ ցուցար
մարմնաւոր. երկնային կրօնիցն՝
եղեր հրաշաւոր. երանեալ որբու-
հի՝ միջնորդ զօրաւոր. տի՛՛:
Վերագոյն մաքրութբ՝ զգեցար
զերանին. մաքրասուն կուսութբ՝
եղեր մայր բանին. համաբուն
ծաց՝ յայտ ես տիրածին. տի-
րուհի Թագու՛:
Որ ունօղ հրճուանաց՝ անթիւ
խրախութեց. տէրունեան անսահ
ման՝ և անկէտն խոստմանց.

 բու-

բուրաստան տիրական՝ տունկ
անդաստանաց. տիրու"։
Սոտեմ լոյժ աղերսիւ՝ 'ի քեն
երանեալ. զի դու ես քաղցրա֊
լուր՝ և բարեբանեալ. գովելով
միշտ գոչեմ՝ լո՛ւր ինձ դու գո֊
վեալ. տիրուհի Թա՛"։
Նաւկին իսկ լուսոյ՝ փայլուն օթա
րան ը՚նդ անարատ սրբուէ՟ եղեր
բնակարան. երջանիկ բարեխօս՝
մայր անմահուե՟. տիրու"։

Նա ձայն երրորդ։ 44



# ՈՅՍ ԵՂԱ

կան՝ անհասամեմատ՝
Յակոբ I. 18։ դու մայր անեղի. զիա
կածին լո՛յսըն հայրա
Ղուկ I. 27

 կան՝

կան՝ 'ի քում անձնէկի . կրելով Մատթ 2 . 11 :
զովեալ՝ ծընար ըղձեալ 'ի մէջ 'ի Ղուկ
յայրի . օրհնեալ ես դու՝ կոյս 'ի 1 . 42
կանայս՝ մայր երանեալ մարիամ,
մայր անապականն .

Պտուղ ճեմարանն՝ անեղ բանի՝
կոյս դերադրական . արժանա- Ղուկ 1 . 30
ցար՝ հոգւոյն շնորհաց՝ փառօք Եսայ
ավրական . զի ծնար 'ի քէն՝ ան 7 . 14
պարագիծ՝ լոյսըն էական . օրհ
նեալ ես դու՝ կոյս 'ի կա՛ :

Հարսն անարատ՝ մաքրասընունդ՝
յոյժ անապական . ականակապ՝
ոսկիածոյլ՝ տիպ սրբեդական .
անմայր ծընունդն՝ դու իսկ ծը Մատթ
նար՝ անհայր սեռական . օրհ- 1 . 25 :
նեալ ես դու՝ կոյս 'ի կա՛ :

Աէ սրբուհեցն՝ ամենայնաբ՝ ծընօղ
միածնի . ստեղծեալ սեռէ՝ գե- Ղուկ
րա- 1 . 36

րագունէ՝ ընտրեալ տիրուհի. քեզ միշտ գոչէ՝ վերահայցեալ՝ խղճաւկս եղկելի. օրհնեալ ես դու՝ կոյս ՚ի կա՛՛:

դձ Նարասատ կոյս ա͞ծածին մարիամ որբուհի և մայր ք͞րի. յար գանդէ տարար զանտանելին յամենեցունց. օրհնութ͞ ըզքեզ ա͞ծածին մեծացուցանեմք:

Ս.— [illegible] 45



ԵՐԱՄԱ

յայտ 12. 1: քուր՛ հարսն զգեցեալ. լոյս ա-րե—

րեւոյն՝ ըզ քեզ արկեալ. լուսին
ոտիւքդ՝ ըստորներացեալ. եւ աս
տեղօք՝ պսակեցեալ. սբ ածա-
ծին։

Ոստեալ գովեմք՝ զքեզ տէրա-
ծին. խորհրդաւոր՝ խորան բա-
նին. հօր բարձրելոյ՝ սափոր ոս-
կին. եւ տապանակ՝ սբ կտակին
սբ ածածին։

Ի բարձրութիւս՝ բարեբանիս. քաղ
ցըր երգով՝ երգաբանիս. ՚ի սրո
բէից՝ վեհաբանիս. եւ քրոբէից՝
օրհնաբանիս. սբ ածածին։

Գրաւական՝ կենաց մարդկան.
շնորհաց հոգւոյն՝ ընդունարան.
անտեսանողաց՝ հանդիսարան. յու
սադրողաց՝ դու բնակարան.
սբ ածածին։

Որ միածնին՝ եւ հօր բանին. բար

 ծող

Ձ̃ն Յ. 27. Ծող եղեր՝ նոյն անմահին. 'ի հա
մայնից՝ զանտանելին. կրեցեր
'ի քումդ՝ որովայնին. մ̃ր ա̃ծ՛՛:
Ոտեմ 'ի քէն՝ մայր միածնի.
գըթա յիս դու՝ ծընող փրկչի.
կենդանատար՝ըն մ̃ր հոգի. 'ի
քեզ հանդերձ՝ կոյս տիրուհի.
մ̃ր ա̃ծածին:

Լ̃ին լուսոյ՝ ճառագայթի. դու
մայր եղեր՝ կոյս թագուհի. միշտ
յուսալով՝ ո̃վ սրբուհի. յանէտ
գոչէ՝ այս եղկելի. մ̃ր ա̃ծա՛՛:

Գ կ Կենդանի տապանակ կտակարա
նաց նորոյ ո՛ւ խտի ս. որով է՛ ւ̃ր
յերկիր անէ՛տեաց հորդեալ.
հո՛գով 'ի՛ քե՛զ տրպա՛նորեալ բա
նին. վ̃ոյ ամենքեան ըզքեզ
միշտ մեծացուցանեմք:

Նոյն — Հինգերորդ էջ։

46

ՆՈՐ Ե-րուսաղէմ՝ քա-ղաք պանծալի.
միջոց ցնծութեան՝ բնակարան տե-
ղի. դու որ ի վեր սիոն՝ յաւէտ
ցնծալի. զքեզ ակն ո՛չ ետես՝
անտես բաղձալի. ցանկամ տե-
սութեդ՝ յոյժ փափաքելի։
Խորան վեր փառաց՝ լոյս արփիա-
կան. ո՛չ գոյ յարատն՝ ինչ ներու-
մական. լի՛ ես ցնծութ՝ սխրա-
լի կայան. զքեզ ակն ո՛չ ետես
անտես բաղձա՛՛։

Եսայ 64. 4 Կորն 2. 9։

փայլուն օթարան՝ մ̃ք երանե_
լեաց․ անանց բերկրութ̃ի՝ դու
փախագելեաց․ ընդունօղ ունո_
ղաց՝ զզգեստ հարսանեաց․ ըզ
քեզ ակն ո՛չ ետես՝ ան''։

Ո՛վ մ̃ք հարսանիք՝ ընդարձակե_
ցեալ․ փառաց օթեւան՝ քաղա
կոյս փայլեալ․ ըղձալեցուցիչ՝
աննման գոլեալ․ զքեզ ա''։

Ի քեզ բնակեալք՝ ո՛չ կարօտա_
նան․ լուսոյ ծորագի՝ եւ պայծա
ռուէ․ եւ ո՛չ փայլեցմանն՝ իսկ ա_
րեգական․ զքեզ ա''։

Զ քեզ իսկ ո՛չ լուա՛ւ ազինս
մարդկային․ ունկամբ իմանալ՝
եսայ զփառս քոյային․ եւ՛ի սիրտ նոցուն՝
64. 4 ո՛չ անկեալ փայլին․ զքեզ ա''։

Մ՛իշտ ես բերկրալի՝ աննման
բարի․ յաւէտ փառաւոր՝ անտե

 սա_

սանելի. որա՛ զիս արժան՝ տե-
սոյդ բաղձալի. զքեզ ա՛՛։
Պու լոյս ընակարան՝ որբուհեց
տեղի. փառօք զարդարեալ՝ խո-
րան սքրալի. անձկայ փափա-
գի՝ հոգի իմ այրի. զ՛՛։
Ո՛հ աղաղակեմ՝ քեզ աղերսա-
լի. յուսալով տեսոյդ՝ մի՛ յոյս
բարելի. թէ լինիցիմ արժան՝
դեղւոյդ ըղձալի. զ՛՛։
Խորան դեղապանծ՝ անմատանելի,
հանուրքն քեզ բաղձան՝ յաւէտ
յուսալի. զ՞միս ՚ի բազմացն ես՝
որա՛ արժանի. զ՛՛։
Ո՛վ աղօտ մայր մեր՝ սիօն ցըն- Գաղտ
ծալի. ՚ի համայն ազգակցաց՝ 4. 26
միշտ դու ցանկալի. աղեկիզել
դոչեմ՝ ընկա՛լ մի՛ բալի. զքեզ
ակն ո՛չ եռես՝ ան՛՛։

Մ՛որդ աղաչեմք ըղձեղ քո՛ ո՛ր-
դի մաստուծոյ. հանգո՛ զմեր
նո՛ ննջեցեալսն ի՛վերին՛ նոր երու-
սաղէմ. զի մի՛ դարձցի տրտմե՛նկ
ամամչեցեալ ՚ի յաւո՛ւր մեծ
մ՛ատեանի՛ն։

[illegible]

47



համայնից՝ գերախնայ-
լեալ՝ երգաբանիս՝ յա-
ւիտեան. դու բնաւից՝
էակաց՝ կոչող ՚ի յայն՝ յարու-
թե. առ ՚ի նոյուն՝ եւս դու խըմ-
բից՝ արժան բարի՝ գովութե. տե՛ր
բոլորից՝ աղաղակեմ՝ ողորմեա՛
ինձ՝ յարաժամ. միշտ աղեր-
սեալ՝ վերահայցեմ՝ գըթա՛ տե՛ր
իմ՝ ՚ի նոյն ժամ։

Փառօք փայլեն՝ քառաթև խաչն՝
փառաւորեալ՝ յատենի. եօթ_
նապատիկ՝ քան զարեգակն՝ պայ
ծառանայ՝ 'ի յերկրի. զարդ ըզ
գենուն՝ յոյժ ցնծուք՝ փառա_
բանութեան խորհրդի. ծածկեալ լու
սոյն՝ յանստուերն՝ պահեա 'ի
նոյն՝ զօրութե. որ բոլոր'':

Քառակուսի՝ որ խաչ փառաց՝
մեզ հովանի՝ պատուական. քեզ
յուսալով՝ երկրպագեմք՝ ժողով
բարեկրս համայն. և դրոշմեալ
փառաւորեմք՝ ով կենսատու՝ որ
նըշան. լե՛ր մեզ պարիսպ՝ յօրն
ահագին՝ միշտ դու յաւէտ՝ ա_
խոյեան. որ բոլոր'':

Յորժամ փայլես՝ ըզճառագայթ՝
լուսոյ նըշան՝ որ խաչի. մի գա
ւեցցես՝ զհոյլք ծառայիցդ՝ ներ

Ժողովոյն՝ ահեկի. զօրհանա-
պազ՝ միշտ աղերսեմք՝ առա յա-
ջորդ՝ արժանի. որ եմք որդի՝
քոյին սիրոյ՝ ահա յաւէտ խղճա-
լի. տր ողո՛:

Ապ ահա՛ սարսափելի՝ և սոսկա-
լի՝ տեսանի. առ ատտ ամպոյս՝
խաւ՝արամած՝ անհպելի՝ ատե-
նի. թէ որ գայցէ՝ ահագնա-
տես՝ սարսուելի՝ երևի. ՚ի նոյն
ցասման՝ բարկութեան՝ ազատեա՛
զիս՝ անվախճան. տր ողո՛:

դՃ Խաչըն փայլի՛ յարևելից եօթըն
պատիկ պայծառ. քան զարե-
գակն. պայծառանան ա՛րդար
քըն. և մեղաւորքըն ծածկին
յանդըստանէր լոյսոյն. և ՚ծա՛:

48

գահաղանն՝ որ խընայէ. առակ 13. 24.
ահանա խուր՝ զորդին
առէ. զի զոր սիրէ՝
խնամով փարով. տալով զպատ_ եկէ. 30. 1.
ճէր՝ միշտ խրատէ. ո՛հ 'ի վախճա_
նին՝ թէ խընդասցէ. ասէ արամ՝
այսպէս ասէ։

Որ յաճախէ՝ զսէրն ունելով. Ա 30. 1.
սիրէ ըզնա՝ հարկանելով. թէ
հարկանէ՝ գահաղանաւ՝ ոչ մե_ առակ 23. 13.
ռանի՝ խրատելով. ո՛հ 'ի՛։
Մ՛ի խընայեր՝ խրատել զտղայ. Ա 23. 13.
բաւ հոգելից՝ բանից ահա. թէ 23. 14.
անդրանկան՝ աճնես ըզգան. 'ի մահ_ 19. 18.
ճանէ՝ փրկես ըզնա. ո՛հ 'ի վախ_
ճանին՝ թէ խընդասցէ. ասէ ա_
րամ՝ այսպէս ասէ։

Եկլէ. 30. 2 Որ զորդի իւր՝ ուսուցանէ. գո-
վի նովաւ՝ և լուր առնէ. ներ
ընտանեաց՝ բարեկամաց. յա-
ճէտ զինքըն՝ փառաւորէ. ո՜հ
'ի վախճանիդ՝ թէ խըն'':

30. 4: Հայր իւր մեռաւ՝ իբր ոչ մե-
ռաւ. զի նման ինքեան՝ զկըննի
թողաւ. թէ լինիցի՝ սոյն օրի-
30. 6 նակ. հատուցանող՝ զշնորհս ե-
ղաւ. ո՜հ 'ի վախ'':

Որ գու սիրես՝ զնա յարաժամ-
կայ՝ քեզ խըրատ՝ զայս ժամ
'ի ժամ. թէ խընայես՝ ցուպըն
սաստենիկ. գլուխդ հարկանես՝
յա՜մ ժամ. ո՜հ 'ի վախ'':

Եկլէ. 30. 11 Մի՛ տար նըմա՝ զիշխանութի՛. 'ի
մանկութեն՝ և զօրութի՛. և մի՛ ան-
տես՝ արա նորին. ըզխորհեցէլ՝
իսկ չարութի՛. ո՜հ 'ի վախճա'':

Ի՛ զպարանոց՝ նորին թեքեամ. Ա. 7.
Մինչ մատուցէ՝ ըղձամ զբաղեամ. 25.
Մի՛ կարծրասցի՝ ՚ի հաւանել. և 30.
Վիշտ անձին՝ մի՛ լիցի նա. ո՜հ 12:
՚ի վախճանիդ՝ թէ խըն՛՛:

Ա՛ւ զորդի քո՝ միշտ դիեցո՛. որ Եկլէ.
դանալից՝ զքեզ արասցէ. խաղամ 30. 9
նովաւ՝ միշտ խնդալով. մինչև
՚ի մահդ՝ տրտմեցուսցէ. ո՜հ ՚ի
վախճանիդ՝ թէ խըն՛՛:

Վա՜յ թէ որդին՝ ընդ հօր խըն, Եկլէ
դայ. վա՜յ միշտ առ հայրն՝ որ 30.
երես տայ. պատժապարտի՝ սա՛ 10: Եկլէ
յաւիտեան. որ նորին խնծիցն 30. 1:
հաւատայ. ո՜հ ՚ի վախճա՛՛:



Մովսէս նախկին մարգարէից.
Նախապատմօղ՝ գոլնա́ է ից.
Նախ սակս լուսոյն՝ եղականի.
Հանրից գոյիցն՝ որ ըղձէր նի։

Զ ԸՔՆՍ~ Ծննդ
զախայլ լոյսն և 1. 3:
զանկան · այյծառ Եբրա
փառաց՝ արեգա- 11. 3:
կան · դու գերալոյս՝ անեղական ·
զ՚նա՛ արարեր՝ բանիւ միայն ·
զտեսիլ գոյից՝ փայլուն գունոց
հաստատեցեր՝ մինչ յաւիտեան:
Ի զճառագայթ՝ երկնից փառօք ·
փառաց պարծանք՝ պարք աստե
ղօք ·

Ձ. 5 ղօք· Լոյս անմատոյց՝ անճառ
զօրօք· գոյացուցեր՝ քում հրա-
մանօք· զտեսիլ գո՛՛:

ՁԴԳՅ Լոյս առաջին՝ անեղական·
Ձ. 5: յառաջնաւուր՝ զլոյսն եղական·
դու ստեղծեր՝ յոյժ աննման·
խորհուրդ մեծի՝ մբ յարութե·
զտեսիլ գոյից՝ փայ՛՛:

Պաճանչագեղ՝ լոյս փայլեցեալ
ամենարձակ՝ ճառագայթեալ·
որ դու անեղ՝ լոյս իմացեալ·
լոյս 'ի լուսոյ՝ լուսաւորեալ· ըզ
տեսիլ գոյից՝ փայ՛՛:

Դու գերալոյս՝ միշտ լուսեղէն·
գերահրաշ՝ անձեղէն· լուսաւո-
րեալ զիս զհողեղէն· անճառ
լուսովդ՝ որ քն եղեն· զտե-
սիլ գոյից՝ փայլուն դունոց· հաս-
տատեցեր՝ մինչ յաւիտեան:

50

Ի լուսոյ՝ փայլեալ. դու
լոյս անճառանեալ. ան-
ճառ լուսոյ լոյս լոյս՝
ծագեցար յերկնից. գերապայ-
ծառ լուսով քոյին. լուսաւո-
րեա՛ տէր իմ տէր, աղաղակեմ
քեզ:

Գերագոյն՝ բարի. դու տէր համ-
մայնի. լոյս 'ի լուսոյ լոյս լոյս՝
ծագեցար յերկ'':

Բանից համայնից. տէրդ բոլորից.
լոյս 'ի հօրէ լոյս լոյս՝ ծա'':

Ի քէն ընկալան. առելոյ՝ զայս
բան. լոյս առաքեալն լոյս լոյս՝
ծագեցար յերկ'':

Գլխանի՝ ոչ այլ. որք են այլ՝ և
այլ. դու յաւաժամ լոյս լ'':

Որ և աղերսեմ. յորժ աղաղա
կեմ. վերագոչեմ լոյս լոյս՝ ծա՛ :
Պաղատական՝ գոչմամբ. մաղթեմ
հառաչմամբ. յաւէտ ձայնեմ
լոյս լոյս՝ ծագե՛ :
Անուն աստուածական. լոյս գերադրա
կան. ՚ի հօրէ ծնեալ լոյս լոյս՝
ծագեցար յերկ՛ :

Ա.— [illegible] : 51

ծննդ. 2. 15: Տուն ցընծութե՝ համայն
մրց. և բնակարան՝ մաք
րեալ հոգւոց. ցանկամ
հաղորդ՝ դու փառաց
քոց. ո՛վ փառահեղ՝ դու ան
վախճան. ազգ և ազինք՝ միշտ
քեզ բաղձան.
Սրկինք երկնից՝ արքայուԹն.

 աԹոռ

աթոռ փառաց՝ արդարուէ․ այլ
ծառ փայլուն՝ յոյժ աննման․ ո՜վ
փառահեղ՝ դու անվախճան․ ազգ
և ազինք՝ միշտ քեզ բաղձան։
Ընծանց բերկրուէ օթարան․ ամծա
տունեկ՝ որք դարաստան․ փառաց ծննդ
տեղի՝ իսկ բուրաստան․ ո՜վ փա 2․8։
ռահեղ՝ դու անվախճան․ ազգ և 9։
և ազինք՝ միշտ քեզ բաղձան։
Մենալոյս՝րդ տեսութի․ մինչ
բաղձանաց՝ դու փափկութի․ զը
նարծացու՝ցինչ բերկրութի․ ո՜վ
փառահեղ՝ դու անվախճան․ ազգ
և ազինք՝ միշտ քեզ բաղձան։
Զորեք կուսի՝ որց խորան․ առ
քեզ ընակին՝ որք ամ․ մշտալի
լոյս՝ դու յաւիտեան․ ո՜վ փա-
ռահեղ՝ դու անվախճան․ ազգ
և ազինք՝ միշտ քեզ բաղձան։

 Զի

1 Կոր՟ 2. 9. Զի զքեզ մարդոյ՝ ակն ոչ ետե-
սաւ . ի սիրտ նոցին՝ իսկ ոչ ան-
կաւ . և ոչ ունկամբ՝ երբէք լը-
ուաւ . ո՜վ փառաւ'':

Ով տեսուչ՝ երանական . անծու-
թէ՛րն հուն . գումարք բարեաց՝ըն
կատարման . ո՜վ փառաւ'':

Սաղ՟ 86. 3 Զքեզ ոչ ի՛իք՝ կարեն չափել .
ոչ երկրաչափք՝ չափաբերել . և
ոչ քերթողք՝ հասու լինիլ . ո՜վ
փառահեղդ դու ան'':

Ոչ տրամաբանք՝ տրամաբանել .
ճառաբանք՝ արտայայտել . ինչ
ոչ բանիւք՝ վերաբերել . ո՜վ
փառահեղդ դու անն'':

Ընձառ լուսով՝ ճառագայթել .
և մշտադոյ՝ լուսով լցեալ . միշտ
ցանկալի՝ խորան կազմեալ . ո՜վ
փառահեղդ դու ան'':

 Զքեզ

Օ՛քեզ պատրաստեաց՝ որ սիրե-
լեաց. յնկերակցիլ՝ ընդ հրեշ-
տակաց. զ՛մեզ առ 'ի քեզդ՝ փա-
փագելեաց. ո՛վ փառաւ՛։

Նոյն յունարէն։

Ա՛քսիօն էսդին՝ օս ալիթօս, մա-
գարի՛ զինսէ դին՝ Թէօդօ՛գօն,
դին՝ այիմագա՛րիսդօն դէ՝ բա-
նամօ՛միդօն, դէ՝ միդէրադու
Թէու իմօն։
Դին՝ դիմիօդէ՛րան դօն խէրու-
վիմ՝, դէ՝ էնտօքսօդէ՛րան ա՛սին-
գրի՛դօս դօն սէրաֆիմ՝, դին՝
ատիաֆթօ՛րօս Թէօն՝ լօ՛գօն դէ-
գուսան. դին՝ օ՛նդօս
Թէօդօ՛գօն սէ՝ մէ-
գալի՛նօմէն։

Ցուցակ իւրաքանչիւր համարի
երգն թէ որպ երգի ։


Մարիամու՝ մագդաղենի 1 ։
Լուսաւորիչ՝ Թագին այրձ'' 2 ։
Խաչեալս գունով է սաա'' 3 ։
Խաչեալս գունով՝ է սաա'' 4 ։
Երկինք երկնից՝ իմացա'' 5 ։
Սարսափի ահձն իմ լալի 6 ։
Խընկին ծառին նըման ես 7 ։
Իսկուհի ա՛ծածին՝ կոյս 9 ։
Էջմիածին ծնօղ մայր մեր 10 ։
Որ այսօր եկեալ՝ 'ի կու'' 11 ։
Գունով երանգ պճնեալ 13 ։
Հովիւ երկնային՝ ա՛ծդ իմ 14 ։
Տիրամայրըն հանդէպ 15 ։
Գառն ա՛յ 'ի սպանդ վա'' 16 ։
Յարմար ձեւով պատուա'' 17 ։
Այսօր գաբրիէլ հրեշտա'' 21 ։
Անխնեալ իւղաբեր կա'' 22 ։
Այսօր նոր արև հարեալ 23 ։

Մ'չարդըլըզաց վէմն երկ'' 24 ։
Նըրեսուն ամեայ՝ 'իյոր'' 26 ։
Յարմար ձեւով՝ պատուէա'' 29 ։
Ա'ֆածէն կոյս մարիամ․ սր'' 32 ։
Պարտաւորեցայ՝ պար'' 50 ։
Հէրտէմ քի նազիկէ օլ մէ'' 8 ։
Ս խսալ մէմուլիքեն սեն'' 12 ։
Գոզըլ հասան փաշատր'' 18 ։
Հէյ կիւզէլլէր՝ շէյհիշա'' 19 ։
Հէմ միսիրի տամի զիւլ'' 20 ։
Պիր մելէք սիմա փէրի'' 25 ։
Սէն կիտելի պէն աղլէ'' 27 ։
Սֆահան գունով է ա'' 28 ։
Նազար իթտիմ պարզը 30 ։
Շ ահանիւր շէվք 'իտեր 31 ։
Լ վլէրինին՝ էօնիւյ մէր'' 33 ։
Նէտէնտիր չէշմի ֆէթ'' 34 ։
Օւ կիւզէլ կէօզլէրի'' 35 ։
Ա'թէշի աշգընա եան'' 36 ։
Նամազընտայ՝ կիւլը սապ'' 37 ։

Սանայ հէյմէն կիւճիլէ 38։
Բահլէվէնտոխմ դանալըմ 39։
Գոալմաար հիչ աշգնլա 40։
Եա՛ իլահի՛ սէն օգիզի ին'' 41։
Տէրտի հիճրանէ թաալի'' 42։
Սէրայըն ալթընտան կէ'' 43։
Էօմրիւմիւն վարի է'' 44։
Եա՝ խալքանին ծնունդ ա''։
Իլք ադշամտան՝ էֆէն'' 45։
Բիր տիլրուպայէ իւֆ'' 46։
Կէօզլէրիմտէն եաշ եէ'' 47։
Տիմաղի ճանէ պույլի բեա'' 48։
Եա՛ ամէր քաղաք եղև անձն։
Օւ չէվքի աշգ պէնտէն 49։
Պարտամ՝ օրեցայ՝ պուր'' 50։
Տիլմէտա օլուր հօշ եա'' 51։
Լ՚ատ վ՟ այնր եդաք զցանկն, թէ
առեալ զտեղի, դուն ինչ զերա-
ժըշտական թէուին կիրառեցէլ,
հըմետ տն. և յետ նորին կարգն
երգոց՝ ընթանալոց եմք։

## Աշխատութիւն ինչ երաժշտական:

Գիտելի՛ է նախ՝ զի ձայն իր, որ՝ յԱծի աստ գտանի, կարէ գոլ ենթակայ արտադրուե. քանզի՝ ոչ ի՛նչ է, որ՝ ո՛չ լինիլ ո՛չ իցէ ընդ արտադրական եղանակի. որպէս ձայն գիտութիւն, օժանդակութիւն զգայարանացն՝ սկզբնաւորի յիմացողութենէն. զի ոչ ի՛նչ է յիմացողութեան, որ չիցէ առաջ նախ լեալ յըզգայութեան. ըստ իմանալոյն՝ միտք. ըստ կամելոյն՝ կամք. զի որպէս իրք ընդ հանուրք ուսանիլ բնաւորեցաւ, լինի տրամախոհութեամբ. եթէ մարդ ոք, որ արհեստ ինչ ուսանիլ կամի, ո՛չ այլով ի՛բր կարողանայ գիտել՝ բայց եթէ ուսմամբ և տրամախոհութեամբ: Աստի որ կամի

գո՛ւ Երաժիշտ լրապէս, պատշա-
ճէ նմա իմանալ՝ կամ գիտել
զբնաւորութիւնս և զզօրութիւնս ար-
հեստիս, այսինքն զթիւս. զհանգա-
մանս. զչափս. և զքանակս. ըզ-
բաժանմունս. զվերինս. զներ-
քինս. զէլ և էջութիւնս. և զինչու-
թենական զօրութիւնս խազերին ձայ-
նից. զի կարիցէ զողջօք բուռն
հարելով ներբորամադրել առ 'ի
լոյսն բնական, գործիական
թէութեցն արտաշնչման: Երկ-
րորդ՝ զի կրկնակի կարեմք ա-
պացուցել զիրէ իմաքէ. նախ՝
սեռօրէն՝ կամ հասարակաբար.
Երկրորդ՝ յատկապէս՝ կամ մաս-
նաւորաբար: Սեռօրէն ապացու-
ցանեմք զիրէ իմաքէ, յորժամ
նկատեմք զնա ընդհանրապէս.



մր-

որգոն մինչ ճառաւեմք զարհեստն,
կամ ըստ այնմ զի է ուղիղ բան
կերպաւորեալ. և կամ ըստ միլխա-
խայից, է ունակութ ուղղեորիչ
մտաց զգալեօք. Յատկապէս ճա-
ռեմք զենթակայն իմքն, մինչ
խօսիմք զարհեստն, ըստ այնմ
զի է այս արհեստ. և կամ ըստ
այնմ զի է արհեստն երաժշտա-
կան. որ ասի յունարէն՝ մուսիկէ-
տէխնէ: Արդ՝ որպէս ասէր է
քնարահարաց և երգեցողացն
երաժշտականուեց, նախանուա-
գումն զայն սկզբնախաղ ասա-
ցեալ հանդուրակին՝ և համաձայնե-
ցուն աղեացն քնարին՝ կամ այ-
լոց գործեաց երաժշտականացն,
զորս նախ քան զերգելն՝ փորձա-
ռոցել, և ապա սկսել լինելեաց

 ախոր

ախորժելի ձայն արկանել. սա-
կայն առնանի զայն՝ ուեռօրէն,
սակս սկզբան իրացն համայնից
երաժշտականաց, համեղ և մեղ-
մաբար ակնեցելոց. վ՟ այնր իսկ
կարճառօտակի և եթ առեալ
մեր, յարեսցուք ըստ ներհեղա-
կան ներշնչմանն շնորհի հոգ-
ւոյն անեղծի, զելևէջութ՟ցն՝
զվերբելեակացն և զստորիջելոց
խաղից ձայնից, զբաղդատու-
թ՟ցն տրամաղոյգ և զուգահա-
ճասարութ՟ց նոցին և զքաղցրա-
նուագ հնչմանցն ասութ՟ց, որ
ասէ ցուցանողէն դելօսէ՛ս. որք առ 'ի
մեզ մնացեալք են 'ի հին խաղա-
սաց անուանի և հռչակաւոր հե-
ղինակացն երաժշտաց: Զի այս
երաժշտականն արհեստ՝ գովե-



լի՛

լի՛ է ներ արհեստից. Նախ՝ մտ̃ծա
շունչ գիրն երևոյէ Ծննդ 4. 11:
Թէ՝ էր Յօբաղ անուամբ ոմն,
որ եցոյց զերգս և զքնարս:
Երկրորդ՝ 1 Մնաց 4. 54: ասէ՝ 'ի
նմին ժամանակի նորոգեցաւ
յերգս օրհնութե̃ 'ի փող և 'ի քնար
և 'ի սրինգ և օրհնէին զՏր̃ յեր-
կինս և յաջողեացն̃ց: Երրորդ՝
Յօբայ 21. 12: Թէ առեալ սաղ
մոսարան և քնար և ուրախ լինէ
ին ձայնիւ երգոց: Չորրորդ՝
1 Թագ 16. 23: առնոյր դաւիթ
զքնարն՝ և նուագէր ձեռամբ իւ-
րով: Հինգերորդ՝ 2 Թագ 6. 5:
դաւիթ և որդիքն իՀլի խաղային
առաջի Տն̃, տաւղօք և նուագա
րանօք՝ զօրութ̃ք և երգօք. և քնա
րիւք. և սրնգօք. և Թմբկօք.

 և

և ծնծղայիւք և փողովք ։ Վե-
ցերորդ՝ 1 Մնաց 15 . 16 ։ և ասէ
Դաւիթ ցիշխանս ղեւտացւոցն .
կացուցէք զեղբարսն ձեր . որք
երգէին զսաղմոսն նուագարանօք
երգոցն . քնարօք . և սրնգօք . և
ծընծղայիւք . ամբառնալ զձայն
սըն 'ի բարձունս , ուրախութե
ձայնիւ ։ և 19 համարն ասէ՝ և
սաղմոսանուագքն , տաւղօք պը
ղնձեօք լսելի առնէին զձայնն ։
27 . համարն ևս , և Դաւիթ զգե
ցեալ էր պատմուճան բեհեզե-
ղէն . և ամ ղեւտացիքն բարձին
զտապանակ ուխտին տն . և սաղ
մոսանուագքն , նուագէին ձայ
նիւ յոբելեանն ։ (որ է ձայնքն
փողոց . և նուագարանաց . և եր
գոց . զոր 'ի հնումն , երբայեցիքն

հրնչէին (ասէ) հանդիսադէս իբ-
րև զբարբառ փողոյ և երգոյ,
յորելեան տարոյն, այն է ամ
Թուոց գլու 15. 28: և 27. 17)
և փողով. և ծնծղայիւք. նուա-
գելով. քնարօք և տաւղօք: անդ
ևս, 16. 5: Թէ՝ նուագարանօք
տաւղաց՝ և քնարաց. և ծրնծ-
ղայիւք նուագէին: և 42 հա-
մարն ևս, փողօք և ծնծղայիւք.
նուագել քնարօք երգոցն այ և՛
Խօթներորդ՝ 2 մնաց 5. 12: Մինչ
'ի 13 համարն, թէ գևտացիքն
սաղմոսանուագք. տաւղօք. և
քնարօք և սրնգօք. կային յա-
րևելից կողմանէ սեղանոյն. և
ընդ նոս քահանայք ճ և ի՛ հար-
կանէին փողս. և եղև ձայն 'ի
հարկանել զփողսն. և յերգել

սաղմոսսն. և ամբառնալ զձայն
սրն միաբան ասելով՝ օրհնեցէք
զՏր. և բարձրացուցին զձայնսն
փողովք և ծնծղայիւք. և գոր
ծեօք երգոյն և՛: Ապ ասէ մեկ
նիչն սրբանուագ երգոյն, թէ
յետ մովսէսի դաւիթ յարեաւ
մարգարէ. քանզի՝ թէպէտ ե-
ղև սամուէլ և այլք յաւուրս
դատաւորացն. սակայն դրուն
շնորհն ոչ ետ նց հոգին այ: Իսկ
մարգարէ, որ գիրս գրեաց ձե-
ռընտուութ հոգւոյն, մովսէս
էր. և յետ նր՝ դաւիթ: Արդ՝
քանզի մովսէս հրամանաւն այ
շինեաց զխորանն և աւանդեաց
զօրէնսն և կարգեաց զդասս քա-
հանայիցն. և ուսոյց նց, թէ ա-
խորժելի է և սիրելի այ, պաշ
տելն

տելն զնա՝ և փառաբանելն։ Նա՛
յորժամ յանընտել և 'ի հեթանո-
սական մտացն յոյն, սկսան վար-
ժիլ և զոհս մատուցանել այ և
պաշտօն 'ի խորանն առաջի տա-
պանակին, կարօտացան և երգս-
ունել օրհնութեց՝ անուանն այ։
զի և հեթանոսացն՝ որոց 'ի մէջ
հարկ էած զպարիսպ օրինացն՝ և
զզոհն 'ի սովորութեցն նց ընկալաւ.
այս էր աւանդութիւն ասէ երգօք
և եղանակօք զպաշտօնն պայծա-
ռազարդել։ Ս՟ա այնորիկ յետ
մովսէսի որ զօրէն և զսահման
պաշտելւոյն զածուսոյց· յա-
րոյց ած զդաւիթ, որ զերգս
և զաղօթս ընդ պաշտօն զոհիցն
խառնեաց· ըստ որում ասէ, մա-
տուցէք տն որդիք այ մատուցէք
տն

տն զործելս խօսյոց. զի այնպէս
վայելչագոյն պաշտօն փառացն
Այ ՚ի խորանն երգովքս. զորս
դասք դասք պաշտօնէիցն նուա-
գէին. քանզի՝ քաղցր և ախորժ
է մարդկան ձայնն երաժշտութե,
և ՚ի համանուագ վաղվաղակի նը
ճաձից զքնութիս ուրախութե կամ
տրտմութե. ըստ որում և զազդու
մըն առնէ զձայնին. զի զաշխա
տութ զտեալ ճանապարհին ամե-
նեցուն, ուսուցանէ հնարելոց եր
գոցն և երգարանացն քաղցրու
թբ՝ և անցցէ զկամս մարդկան
անխռովլ և աներկիւղ յնտանու
թի Այ. և ոչ այնպէս որ այժմ
իսկ գոն և հետևեն բազումք
(ոչ բանիցն է կարգ ասել) ա-
հա օտար ազգացն երաժշտու

Թեց՝ կարի հետամուտ լինելով,
որք իբր ՚ի վ~ երկոտասանից կեն-
դանակերպիցն երից քառից ա-
նուն ձայնի եղեալ սորասեն
ըստ կարգի [illegible] ն՛՛
Լ՞ւ եօթանցն մոլորակաց վ~ երր-
երկեակ և մի անուն համանադ-
րելով (որոց ասի [illegible]
է [illegible]) ասեն ըստ կարգադրու-
թեն [illegible] ն՛՛: Լ՚ւ
և ՚ի վ~ չորից տարերացն, չո-
րից միոյ անուն անուանադրելով
(որոց ասի չուհար շէօպէ) ասէն
[illegible] ն՛՛: Նաև՝ զքը
սանևչորս ժամն, յերկուս տրա-
մատելով, չորից տասանց և ու-
թից միոյ ձայնի, ք~ մագամի ա-
նուն և ս յարմարեցեալ ըստ ե-
ղանակաց իմիք (որոց ասի Թէր

քիպ) այսպէս. փէՆճա–նէ–ահ. ուշէ–
րահ. Նէնէրէշ. ա'': Նա՛ զայսոսիկ քս
այսու կերպիւ եդեալ տուսայտ
լաբանեն բնաստեղծական կեղծ
մամբ, թէ պղատոն, որ է Էֆլա–
տուն, որ զձև քնարին, ծ՟ թամ
պուրին հնարեաց վեշտասան լա
րիւ աղէպնդեալն իրօք. ծ՟, փէր
տէով. զայս վերոյ ասացեալ
ձայնքն արհեստիւ իմն թուե–
լով ասեն, թէ եօթանասներրոր
դի և մի երրորդի ձայնքս, յո–
րում նուագարանի զեօթանա–
սուն եղանակ ձայնից հաստա–
տութին եցոյց՝ և երգով նուա–
գեաց. Նաև՝ ունին սոքա կերպ
կերպ եղանակ ձայնիցն ասաց–
ուածոց. յորոց ոմանք 'ի վը՟
ինն պարունակացն երկնից զին–

ներրորդ անուանս եղեալ՝ և առ
երկուս բաժանելով զնոյն, ա-
սեն շարղէ ռոգէն՝ և շարղէ հոքէփ։
որպս առաջնոյն ասեն՝ ըստ յար
մարութեան խուրոց տէ՛նէ տէ՛նա տէնէ՛նէ
ն՛՛. և երկրորդին՝ (տէնէնէ՛նա՝ տէնէնէ՛նա
տէնա ն՛՛։ և ոմանք 'ի վ̅ր քսան և
չորից ժամուց, քսաներրորդ և
չորրորդ միայն անուն եղելով
ասեն (որ է ուսուլ) ըստ կարգին
չէնայէր և այլք, տիւմ դէքէ
տիւմ տիւմ դէքք և՛՛։ և այլ բազ
մազան տեղիս բազումք 'ի յո-
գունս բաժանելով դնեն զան-
ձանս, որ 'ի միջի էտվարի, որ է
գիրքն նոցին երաժշտութե. և
արդ՝ ո՛չ թէ զտոսա անարդեալ
հերքեն ոք հարքն մեր ընդ եկե
ղեցական պաշտօնէիւք, զի է

 անար

անարգեալ և հերքեալ ՚ի մ̃բ
աւանդութ̃ես մերմէ, այլ՝ և ընդ-
խաւարասիրացն դատակցեն. և
ո՛չ միայն զայսոսիկքս, այլև ըղ
յառաջնմէ ասացեալսն ես հեր-
քէ՝ անարգելով արարիչն եղելոց.
ամովսաւ մարգարէի 5. 23:
ասէ՝ ՚ի բաց արա յինէն զձայն
երգոց քոց. և զնուագ սրնգայ
քոց ես ո՛չ լուայց. և ընտրեաց
փողս իւր բանաւորս զվարդա-
պետս եկեղեցւոյս. որոց և ա-
սէ՝ բարձրացո՛ զփողս բարբառ քո
աւետարանիչդ եմի: Զի ո՞պ
սաղմոսն որ մարմնոյ և հոգւոյ
յարակցութ̃ կատարի օրհնութին
այ̃. ումեմն փող լինելով ՚ի մար-
մինս գործի հոգւոյն՝ և երգա-
րան. և ումեմն շարժեալ զմուտն

իմաստից, ք հոգևոյն և սուրբ, սաղմոս և օրհնութի արարչին մե- րոյ հնչեցուցանել առ մեկնիչն ածայնոյ քնարերգութեան: զի մար- գարէն դաւիթ, որ ըստ յու- նաց՝ տաղէր Բոֆէ՛բէ. հոգևանն ա- ւէ երգեր զտաւան աղեին. զի ինքն իսկ վկայէ ասելով. Թէ տաւան աղեայ սաղմոսարանաւ՝ ի ձայն օրհնութե գովելը: սաղ՛՛ 32. 2: 91. 4: և 143. 9: զի սաղմոսարանն անուանի գիրքն սաղմոսաց. որ ըստ յունաց՝ (ψαλτήριον՝ որ թարգ- մանի (ասէ) երգ. նուագ. ներ- բող. և կամ օրհնութի երգաբա- նութեց 1 մնաց 13. 8: սաղ 3. 1: և 149. 3: իսկ սաղմոսաբանն՝ և սաղմոսասացն՝ երգեցն՝ օրհնաբան և կամ երգիչ լսի 1 դատ 5. 3:


սաղ

սաղ 7. 18: 4 Թագ 3. 15: 1 Եզ-
րաս 5. 42: և 8. 24. Մ.յլ մա-
նաւանդ՝ սաղմոսարանն մանա-
ւորապէս նշանակէ նուագարան
կամ երգարան ինչ, եռանկիւնի
կերպարեցեալ բազում աղեօք, որ
ունի զձեւ ծոց 'ի կոյսն վերին,
յոր թելք աղեացն հաստատել
կան և յարմարելով բաղադանել
հանդիսացուցանեն ըստ կարգի
շարիցն. (որպէս տեսանի յառաջին
պատկերն սաղմոսի, որ 'ի ձեռին
սբ մարգարէի) և հարեալ փո-
քերբ գործեալ իմն կամ մա-
տամբ 'ի ստորին կողմանէ՝ սկսա-
նին նուագս քաղցրանուագ ձայ-
նիւ հնչել: 3 Եզրաս 12. 27: զի
որպէս քնարն, որ և ջնար. ըստ յու-
նաց՝ կիթառա, սմ տարբերի 'ի սաղ-

մոտարանէն․ զինա աղէյարմար
թելիւք յարմարի․ և այս պղն
ձանիւթ թելիւք․ և դրուագել
փայտից, սորա վ̃ր ափռեալ և
տարածեալ ձգեն յոգնատող
թելք․ զորս հարկանեն մատամբ
և կամ գործեաւ ինն, որ ես
քաղցրալուր ձայն արձակել սկր
սի որոյ ասի, (...) ծննդ 4․
21 ։ և 31․ 27։ Նաւում 3․ 8։ դա
նի 3․ 5։ յայտ 5․ 8։ Ողլև արին
գըն, որ եղեգնաձև նուագա
րանն է․ զնա և կազմեն յե
ղեգանէ՝ կամ յայլմէ նիւթոյ
բազմազան ծակտեօք․ և առնել
'ի բերանն, հարկանեն փչելով,
զանազան ձայնի եղանակ ցուցա
նեն երաժշտական հմուտքն (որ
...) դանի 3․ 5։ Սյ̃ կամ եր

գեհոնաձև նուագարանն․ զոր կերտեն բազում մանրիկ եղէգամբք մի զկնի միոյ ըստ կարգի շարադասեցեալք․ զոր ածեալ ՚ի բերան, այսր և անդր տարուբերելով հարկանեն․ և զարմանալի իմն եղանակ նուագել տան, (որ է նաղառ կամ ղըրղընայ) 1 Թագ. 10. 5: 2 Թագ. 6. 5: 2 մնաց 5. 12: 1 մակ. 4. 54: և այլ ՚ի տեղիս բազումս գոն ՚ի գիրս սրբս բանք ՚ի վր երաժշտութե արհեստի. զի ոչ յայտ իսկ է, որ մարգարէն դաւիթ նուագէր զտաւանաղին ՚ի սաղմոսարանն հոգւով. որ է այր իմաստուն, հանճարեղ, ճարտարաբան, քնարանուագ և սաղմոսագէտ, նաև հոգւով սրբով լի 1 սամ 16. 18: 2 սամ 23. 2: 1 մնաց

15. 16: և 16. 4: Նոյն՝ զի յոյժ
զօրաւոր է երաժշտականն երգ-
զօրութիւն հոգւոյ յեղաշրջել
ընդ ձայնին ոպ̃ և ազդէ աստ-
ցաւ, տրտմութիւն կամ խրախութիւն:
Վ̃ այսորիկ և անօրինեաց մար-
գարէս զգործիս փողոցն և քնա-
րացն օրհնութեցս. զի քաղցր և
ախորժ լեցի լսողաց և փոփոխիչ
հոգեկան տրամադրութեն. զի էր
առ մարգարէիցն արդարև տաս-
նաղի երգարան, որով զսաղմոսն
երգէր նաև զերգարանն հնչե-
ցուցանէր օժանդակ լինելոյ
քաղցրութեն եղանակին, բայց
մեզ հրամայեաց ա̃ծ ՚ի սաղմո-
սելն, տասնաղի՝ զհինգ զգայա-
րանս հոգւոյ և մարմնոյ ընդ մի-
մեանս յարմարել առնել. զի օրհ-

 նու-

նուէր սրտի՝ և հնչմամբ բերանոյ տայ որք վարդապետեան Ներսէս Լամբրօնացին ։ ՚Նաև յայտ 18. 22 ։ (ասէ) և ձայն քնարերգաց և երաժշտականաց՝ արուեստականաց՝ և փողահարաց և Թըմբկի այլ ո՛չ ևս լուիցի ՚ի քեզ. և 14. 2 ։ Ես ասէ՝ և լուայ զձայն քնարահարաց, զի հարկանէին զքնարս իւրեանց. և երգէին զերգս նորս առաջի աթոռոյն այ̃ ։ որ ըստ առաջնոյն ՚ի բաց հերքել ուսուցանէ ՚ի հնոյ օրինացն ծիսէ՝ և ՚ի նորն մերձակայ առնել. ըստ երկրորդին՝ ՚ի նորն հրաւիրէ օրինայն համանգամայն ըստ նոր աւանդութեանց հայաստանեայցս եկեղեցւոյ. ո՞չ ասի յերգս շարականին, թէ


հրէշ

հրնչմամբ փողոյ սաղմոսարանաւ
և քնարիւ. օրհնեցէք զՏէրն 'ի յեր
կինս. և կամ երգեցէք տէ՛ր երգ
նոր եկեղեցիք ընտրելոց որդիք
սիոնի. որ է օրհնեցէք քաղցրա-
ձայն եղանակաւ. զի որ յայտ
նակ է 'ի միջի հայաստանեայցս
եկեղեցւոյ գտանի մասն ինչ նո
ւագարանաց գործիք, որ նը
պաստ արկանէ աստուածեցս. ո՛չ
զանգակն. ծնծղայն և քշոցն բո
ժոժաղարդ և" որք են զարդ
եկեղեցական արարողութեն և
օժիտ ձայնի երգոյն եղանակաց
ցն, յերգս օրհնութեց. որ է ար-
ւեստն երաժշտականութեց:
Ոչ այս արհեստս, գովելի՛ և ս
է 'ի փիլիսոփայս. զի ո՛չ ստա
ցեալ է յանտունէ կողմանց, թէ

 սկըզ

սկզբունք երաժշտութե՛ է 'ի Թը-
ւաբանութե․ և զի՛ ընդ Թուա-
բանութ՟ լինի առէ, զի Թուաբա-
նութին պարունակէ ընդ ինքն զե-
րաժշտութի, որ հայի 'ի Թուա-
կան համեմատութիս, ըստ որում
ձայնահան․ զի ո՛պ սկզբունք ե-
րաժշտութե՛ 'ի Թուաբանութե,
ապա ցորչափ երաժիշտն ո՛չ է
Թուաբան, ո՛չ գիտէ զիւր սկըզ-
բունս, այլ միայն հաւատայ
այնց․ և Թէ երաժիշտն ունի
զանվրէպ ստուգութի իւրոց սկըզ-
բանց․ վ՟ զի՛ ապաստանի յայն
սկզբունս ո՛չ մարդկային և եԹ
հաւատով, այլ ստոյգ ծանօԹու-
Թ՟ իմն հաստատելով ամ վար-
դապետաց աներկբայ հաւանու-
Թ՟․ ուստի յայնս, երբ ընաւ ին

 Ճըշ

ճշգրիտս, և հաւանի Թուաբա-
նին, ո՛չ իբր մարդոյ, այլ՝ իբր
ապացուցչի։ Ուրեմն է երաժըշ-
տութիւն ՚ի չափ և ՚ի քանակի. զի
որպ (ասէ) Ներգինացին, Թէ՝ էն,
և ոն, բնութ երկար լինելն դի-
տէ քերթողն. այլ՝ զպատճառն
ո՛չ գիտէ. և ձգէ յերաժշտա-
կանն իմաստասէր. քանզի՝ երա-
ժիշտ ո՛չ ասէ՝ զերգեցօղն, կամ
զայն, որ զձայնից գիտութիւն գի-
տէն. այլ՝ կատարեալ երաժիշտն
բանի բուն երաժիշտն է. և ո՛չ
նոքա՝ որ զձայնսն գիտեն և զե-
րաժշտութիւն բանականն գոյանայ,
որպ լալկանքն և մրմունջքն և
երգիչք եկեղեցեաց։ Ո՛ւ ի զայն
օրհնաձայն ը երգաւիքն, շնոր-
հօք հոգւոյն յարդարեցեալք
են.

են. որք կան և օրհներգութ՟ վե-
րերգին, զի չափ և քանակ ու-
նին. զի ո՛չ է՝ ո՛չ ընդ չափով ան-
կեալ ըստ փիլիսոփայից: և զի՝
ո՛չ է խառնորդ և խառնաձայն.
ո՟պ ասէ ա՟ծայինն պօղոս 1 կոր
14. 7: եթէ փող, և եթէ քը-
նար, զի եթէ ընտրութ՟ ինչ
բարբառոյն չա՛ռնիցեն, զիա՞րդ
ճանաչիցին փողոյն հարկանել
և քնարին հնչել. քանզի՝ խառ-
նաձայն արձակիցի փողն, ո՞վ
պատրաստեսցի ՚ի պատերազմ.
ա՟ ո՞վ ուշ եղելոյ պարապեսցի:
զի ահա ո՟պ ասէ դաւ՟իթ ան-
յաղթն փիլիսոփայից, ՚ի կիր ար-
կանելով զերաժշտականն զար-
հեստ, թէ դտօղն արհեստիս,
է՝ որպէս ո՟մն նախնի իմաստա-

 սէրն

ւէրն յունաց, որ 'ի Թրակիոյ:
Վ՟ս սորա պատմի Թէ էր քանաս-
տեղծ և յոյժ հռչակաւոր նուա-
գածու. զի այնչափ հռչակա-
գո՛յն էր, և առասպելաբանեն,
Թէ մինչ զի, 'ի նուագել իւրում,
շարժէր զանտառս և զվէմս. և
կառկառեալ կապէր զընԹացս
գետոց, և ընդարմացուցեալ նու-
աճէր զգազանս անմտից: զոր
մանէ ևս պատմի, Թէ երբեմն
'ի խնճոյս աղեքսանդրի կայսեր
մակեդոնացւոյ նուագել պատե-
րազմական եղանակաւ՝ այնչափ
սքանչելի ներդաշնակաւորեաց,
մինչև ո՛չ կարացեալ աղէքսանդ-
րի համբերել, նոյն ժամայն
իսկ և իսկ 'ի հանդիսի անդ սուր
հանեալ 'ի պատերազմ խրախու-
սեր.

սեր․ զի որփէական երգն, կա֊
րի՛ բաղձալի էր յայնմ ժամանա֊
կի ասէ․ այժմ եթէ գոն՝ յիշա
տակ նորին է․ ոչ ասէ մեկնիչն
ներգինայւոյ, թէ այլ գոյր,
մատունք սոցա էին։ Նաեւ ասէ
փիլիսոփայն, թէ յոյնք, յա֊
ւաղնմէ խուժադուժք եւ վայ֊
րենիք՝ կոչեցան ՚ի միաբանութի
՚ի ձեռն այսր որփէոսի․ զորմէ
յայն սակս ասի, թէ զգազանս
քաղցրանուագ երգովն ամոքեալ
ժողովեաց ՚ի զգազանաբարոյս
և՛՛։ Աւրեմն գովէլի՛ է արհես֊
տըս․ զի ոչ նոյնն ներգինայի
՚ի չորս բաժանելով զուսումնա֊
կանն, որ է [illegible] ջուսնաց,
թէ չորս են տեսակք ուսումնա֊
կանին, եւ երկրորդին շարադա֊


սէ

սէ զարհեստս՝ ըստ կարգի դրիցն
այսպէս. Թուաբանական. երա
ժըշտական. երկրաչափական և աստ
ղաբաշխական. զի ո՛չ ասացաւ,
սկզբունք երաժշտութեան՝ ՚ի Թուա
բանութեան, վասն այնր նախադասէ
զԹուաբանականն. զորս դե-
ղեցին յօրինեալ ձեւօք նկարեալ
պատկերն ցուցանէ առաջի կայդ
այսու կերպիւ:






Ընդ նմին յարէ եւ, թէ ու-
սումնականն քանակի՛ գոյանայ
բաղադանութեն հնչմանց և ձայնից.
քանզի՛ խնդրէ, թէ որնէ կէսա
ձայնն. և ո՞ր կրկնաձայնն. որնէ
երրերկեակ ձայնն. և ո՞ր երկ.քա
ռեակ ձայնն. զայն եւ տե՛ս առա
ջիկայդ դրոշագծեալ ձեւօք այսպէս։




Ուստի՝ զի ձայնքն և եղանակքն և
լարքն և քնարքն 'ի չափ և'ի քա_
նակի են. և Թուի Թէ՝ մինչ
ցայս վայր էին (ասէ) եղանակք
ձայնիցն, յորս երգէին և յար_
մարէին զքնարսն սրբանուագ
ձայնիւ. որ նուագէ զերգս մբս.

 կամ

կամ նուագէին սբ երգք, հո-
գենուագական տաւղօք՝ ազդե-
ցուց̅ հոգւոյն սբյ· որպ ասի,
սաղմոսիւք և օրհնութ̅ և երգօք
հոգևորօք· անդադար փառաւո-
րեմք։ Աւրեմն ըստ դաւթի, գո-
վելի՛ է ութներորդն թիւ։ յորս
եղանակք նուագին։ Նախ՝ զի
է թիւ բացարձակ, որով նշանա-
կի երկիցս քառեակն։ Երկրորդ՝
զի է թիւ դասական։ և ըստ
յօհաննու որոտնեցւոյն, որ 'ի
գիրս վեց օրեայ ստեղծագործու-
թեն, (ասէ՝) երկինն բաժանի
յութներրորդ կամարս․ առա-
ջին և վերնագոյն կամարն զեօթ-
նեսին կամարն 'ի ծոց իւր, որպ
պնակ մի որ ստացեալ լինի ծոց
իւր եօթն պնակ։ այլև՝ յութ-

ներրորդ կամարն եդ արարիչն
համայնից, զերկոտասան կենդա-
նակերպսն և զայլ անթիւ բազ-
մութի աստեղաց ասելով գոլէ'
զութներրորդն զթիւ։ Զի որպ
եբրայեցիք 'ի հնումն օրինի ութա-
ղեայ քնարաւ երգէին զսաղ-
մոսն. որպ բառիւս ութերրորդ'.
ըստ առման եբրայեցւոց, նշա-
նակէ ութաղեայ սաղմոսարանն.
յն զութ աղիս կամ լարս ունող
քնարն. Աստի ասելով սաղմոս'
վն ութերրորդացն. և կամ 'ի
վր ութերրորդացն, կամի ա-
սել, թէ սաղմոսն այն, է երգե-
լի ութաղեայ քնարաւ. որպի է
սաղմոսն 6. 1։ և 11. 1։ և այլք։
և որպ երգն սաղմոսաց, է ութ-
կանոն. ըստ որում է բառ յու-

 նա

նական, տալ գանօն կամ քա-
նուն. նաև ղանուն. որ 'ի մե-
րումս, կանոն. որ և տալ մինն
յութից հատուա՛ծոց սաղմոսա-
րանին։ որ յայտ է, առ ութ
կանոնն, ութ ութ գուբղայս բա-
ժանեալ են, որ 'ի մի՛ ութաղէ՛յ
քնարի։ Նոյնպէս ձայնն յունաց,
է ութն. որպիսի է և մերն. որ
նախ՝ ութաղեայ սաղմոսարանն,
երկրորդ՝ սաղմոսն ութ կանոն։
և երրորդ՝ ձայնն յունաց՝ և մերն
հաստատեցե՛լք են. ձայնի՛ եր-
գոց՝ և հանդերձ նուա՛գերգու-
թե̄ ք քաղցրաձայն եղանակա՛։
որ՛ տալ յերգս օրհնուե՛ և 'ի ձայն
սաղմոսաց անդադար փառա՛ւո-
րեմք։ Նու ասցէն համաձայն գը-
տանելոյ վ՛՝ հին քերթողքն

զմասունս տաղաչափական ոտից բաժանեն 'ի տեսակս յուԹներրորդս . որոց ըստ կարգի առաջնոյն ասեն ստեղ , որ ունի զառաջինն միայն երկար . ո՛րգոն օրհնեցո՛ւք . և այլն որ է վերջատանջ . քողաբորբ . քօղազօտ . հաւէեղ . աւարտեղ . ներդև . ուԹերրորդն՝ Սոնք : Կաև՝ սահմանեն զտաղն բաժանելով , Թէ տաղն , է բան բաղկացեալ 'ի յոտից չափեցելոց . և բաժանի յուԹն տեսակս . որք են այսպէս՝ վեցաչափ . հնգաչափ . անուշ . ասքլէփէական . փալէկչէական , Սափիքական . անափէստական և եամպական , որ ունի զվեց ոտս և'՛ : աՀա՛ քերԹողք ևս զուԹերրորդն զԹի՛ւ կիրառուԹեան

տակս երաժշտութե, ուրեմն չափ
և քանակ ունի երաժշտութին ե-
կեղեցական: Արդ՝ ուրեմն ա-
սասցուք նախ՝ ձայնիցն թէութենց՝
ըստ կարգի, և ապա խօսիցն՝
ըստ դրութեց. որպէս ասացաք, թէ
ձայնն յունաց, է ութն՝ (որպէս և
մերն) որ ըստ յեղունի ն~ց ասի,
օկտօ՛իխօս. այլ օկտօ՛ն է ութն. և ի-
խօսն՝ է ձայնն: Ուրեմն ըստ դը-
րութեցն կարգի, է այսպէս. հան-
դերձ սկսուածովք. առաջին սկսեալ

բրώդου . . . . . . . . . . . . . . . անանէ՛ս
տէ՛փդէրου . . . . . . . . . . . . նէ՛անէս
դրի՛դου . . . . . . . . . . . . . . . . . նանա
դէ՛դարդου . . . . . . . . . . . . . . ; այիա
բլայիου դու բրօ՛դու . . . անէ՛անէս
բլյիου դու տէ՛փդէրու նէէ՛նէս
վառխս . . . . . . . . . . . . . . . . . ա՛անէս
բլայիου դու դէդա՛րդու նէա՛յիէ

Ըհա քաղցրութ ընդ Նմա և մերն
ձայն՝ այսու կերպիւ ։

առաջին ձայն . օրհնեսցուք ըզՏր
առաջին կողմ . օրհնեսցուք ըզՏր
երկրորդ ձայն . օրհնեսցուք ըզՏր
աւագ կողմ ; օրհնեսցուք ըզՏր
երրորդ ձայն . օրհնեսցուք ըզՏր
վառ ........ օրհնեսցուք ըզՏր
չորրորդ ձայն . օրհնեսցուք ըզՏր
վերջ ....... օրհնեսցուք ըզՏր

Ըստ կարգի դըրջ՝ , է՛ այսպէս .
սակայն ըստ ասուէց , սկսուա-
ծոցն է՛ այլիմնապէս . զորոց օրէ-
նակն դիցուք աստէն խերաքան-
ջիւր աստուծք հանդերձ ։





Նէ

անանէս . նէայիէ . աանէս .
նէէանէս . անէանէս . նէանէս .
նանա . այիա . անանէս .

նէանէս . անէանէս . նէայիէ .
աանէս . նէէանէս . նանա .
այիա . անանէս ։

նէանէս . նանա . նէէանէս .
անէանէս . նէայիէ . աանէս .

այլա։

անանէս. նէանէս. նանա.

այլա. աանէս. նէէանէս.

անէանէս։

նէայլէ. անանէս. նէանէս

նանա. այլա. անանէս

նէայլէ. աանէս. նէէանէս

անէանէս. նէայլէ. անանէս։

Ահա այսպիսի սկսուածովք դա-
սատացք նոցին, ոչ թէ ոլորե
յոլզոտոտ ընդ սատացուածովքն՝
ըստ արարողութեան ծիսին, կրթեն
զնորակիրթ ձայնաւ որաւէր դա-
սառօղքն. զի որքա յիրաւի
կրթօղք և վարժօղք են իւր
զնորահասան. որ նախ քան բար-
ձըր սկսելոցն, մեղմ և համդար-
ակկ սկսեն ձայնիւ. և այսպ
դուն ինչ յառաջ երթեալ բարձ-
րանայ. ոչ թէ՝ աստիճան քան
զաստիճան ելանելով, իբր ՚ի շա-
ւիղ կրթելոց վերաբերէ զան-
կիրթս. նոյն եղևէջուքն. Բայց
սկսուածք նց, ոչ է նման մե-
րոյն. այլ՝ նախ սկսեն Բուօ՛րդոն,
ապա իջանեն Բէլյէտու-փէզ-ուն.
և այլոցն համդարաօրէն սկսել՝


յետոյ

յետոյ երթեալ յառաջ վերա-
նայ ձայնն, կարի յոյժ բարձր
որչափ կարն քո վերոանի ու
՚ի բարձրացուցանել: Աստէն դի-
ցուք զօրինակն գաղափարին,
ընդ ձայնիւ՛ սկսու՛ածոց՝ և ըղ
մերն հետ նմին դէմ յանդիման:
յորոց ունիմք օրինակ վայելչա-
յարմար նկարեալ ձևօք աղխ-
սակք. առաջի կայդ տես՝ և
սկսեալ այսպէս:



Ահա ՚ի սերումս կրթարանի կըր-
թեալքն վարժեն զթերակիրթս.
որպէս թէ օրհնեսցուք ըզտէ՛ր զի
փառօք է փառաւորեալ։ Ա.յա-
պէս նորա եւ ա՛ն...նէ՛ր, նէ ա՛նէ.
զօրհնականն եդեալ է ՚ի վերն։

 Օ.սա-




Օ սոսա հեղինակքն, յորմար յերկերմամբ յօրինեալ և վսեմա կան պերճաձևութ՟ սեթևեթել շքեղացուցեալ են ըստ ամենա կի պատրաստութեցն. ոչ 'ի միջի իւրեանց եղեալն զայս, կարե գովելի է ինքեանց և ընդունելի

 զի

զի ո՛չ երբէք յօժարին եւ յայտ-
նել այլոցն ազգաց. լինի թէ
ո՛չ կարէ բաւականանալ ըստ
բաղդատման միոջս. որ 'ի միջի-
նդ բացայայտ լինելով, ք գիտե-
լով զելեւէջն. բարձրն եւ զստորն
զսուղն եւ զերկարն եւ՛՛, երբ թէ
գովելի՛ համարելով պահպանեն
զգիտութիւն. ո՞չ բազումք փորձա-
ռեալ են: Արդ՝ եթէ որ տայցէ
կարողութիւն, իւր ամենակարող
զօրութեամբն, 'ի մի խումբ առեալ
զերկուսն միեղինայէս ընթա-
դաստման, սքանչելապանծ չքե-
ղաշուք իմն արհեստիւ պերճա-
ցեալ ջահափայլեսցի, նոյնազօր
իմաստութեամբն. որ տայ զօրութիւն
իմաստութեան՝ եւ հոգի գիտութեան,
իսկ այժմ եւ եթ համառօտին

 ըն-

ընթացեալ բացատրեսցուք զհն-
ջուն խազերն՝ և որպիսի ինչուն
ձայնից. ըստ ստորից՝ ըստ վերե-
լեցն մարմին և անմարմին կար
դացելոյն: Որդ՝ գոլ այսց իրաց
ընդելականացն տեսողութեց՝ ի հնոց
երաժշտականացն քաջահռչակ
հեղինակաց խազաստացողացն,
և առ՝ ի մեզ հասացելոցն. որք և
տեսանեցեալք ըստ ամանակի
գոլ հին և նոր երաժշտացն վսե
մագունից. առաջինն՝ որ է ուրհեր՛.
միջինն՝ որ է դ՛ոէ. և վերջինն՝ որ
է տէ՛ըօ. Նշանաց և խազիցն ե
րաժշտականի արհեստից. Նաև՝
այսու ·—· որ է՝ է՛ոօ. որ ՚ի միջի
...ասացեալն գրքի.
որ է հին երաժշտականութե
արհեստիցն: Իսկ այս էոօն, բա


զում

զուր նպաստ արկանէ յարհես-
տիս. զի Թարգ սորա, ձայնա-
ւոր եղանակքն ո՛չ է հնար գտա-
նել քաղցրանուագ հնչումն. և
ընծայել մտադրողաց, քաղց-
րագին լսողուեցն ձայն։ Որ ՚ի
յարմար յօրինել՝ և սեթևեթել
պաճուճանօք պերճազարդել զբա-
նաստեղծականն զբան՝ և հռե-
տորական ասացուածն գիւտ
կամ հնարս տաղաչափօրէն՝ և
չափաբերական ասութիս. ը̃ Թէ
շարական որ է շարումն ականց.
ըստ ահարօնեան վակասն. որ ըն-
դելուզելս անգին ականբք պատ-
ուականօք. Ելից 28. 7։ և ս՛ շարա-
կան, երգ. կամ տաղ կամ նը-
ւագ. և ըստ մեծի մասին ասի
երգ եկեղեցւոյ։ և Թէ՝ մեղե-


դի,

դի, որ նշանակէ քաղցրութ̅ի̅
խօսելն քրի. և է ներգաշնակա
ւոր քաղցրանուագ երգ՝ յօրի
նեալ բազմանիշ խաղիւք. և ե_
թէ տաղն, որ է՝ ցնծութի հրճ
ուանաց. որ ասացաւ տաղ, եւր
թէ տայ՝ աղ. ըստ մեկնաբանու
թեան տասն ստորոգութեց արիս_
տոտէլի. ո՞չ աղն՝ յուտելիսն,
նոյնպէս տաղն, առ եղանակսն.
այս, որպէս եթէ համ և ճաշնի_
կր լինելով ո՞չ թէ շարէ՝ յօրի
նէ՝ և զարդարեալ պերճացնէ.
որ կարի պիտանագո՛յն է ՚ի ժա
մու երգեցմանն. զի թարց̃ր,
որպէս եթէ անալի և անյարմար
կին լինի. որ ՚ի մերս ձայնակից՝
համաձայն և կցորդ լինելով ընդ
ումեք՝ ձայն հանել մեղմօրէն

 քան

քան զնա՛, որ բարձրաձայն հըն-
չէ. այն է ձայն առնել. կամ
ձայն բռնել. որ է տէ՜ տօշէլ. բայց
անձայն ասի. զի ո՛չ ունի ըն-
կերեան ձայն. Թէպէտ ասայել
լինի իբր ձայնահան. այլ ո՛չ ասելի
է 'ի կարգն ձայնաւո՛ր խազից.
Միայն և եթ 'ի համայնս ձայնա-
՛որաց վերելեակացն՝ ստորիջե-
լոցն՝ մարմին և անմարմին սաս-
ցելոյն, Նպաստ արկանէ և ձայ-
նաւոր լինի. և արդ՝ 'ի միջի ե-
րաժշտականի արհեստիցն, չո-
րեքտասանն խազ՝ լինին ձայն ար-
ձակ. ւ̃ ձայնահան, որ է ձայն
արձակօղ. Որ 'ի միջի սոցա զո՛ն
մակաբառեալն վերելեակ խազք,
որ ըստ նց̃ անէո՛-ոէ. և են սոքա
— օլի՛կօն. / օքսի՛ա. ‿ բէ-


դաս

դասիա. Ս— գոՒֆիամա. Կ
բէլամթօն. ՚՚ ակօգէնգիմադա.
՝գէնգիմա. Հ և խմսիլի: և ըն
տորինչեան խազք, որ ասի Հո_
դէո՛ոսէ. էն մասէնուսն ՝ աբօ՛սդ_
րօֆօս. ՝՝ ախօաբօսդրօֆիսմ՛ն
տէսմի. ՛ աբօրօսի. Կ դրամգիմօսի
բօ՛րօօն. Ռ էլաֆրօ՛ն. Վ և
խամիլի: յորոց ոմանք են մար
մին, որ է ... և ոմանք անմար
մին; որ է ...: վերերեան գու
մարմինք, են վեցեքին սոքա—.
/. Ս. Ս—. Կ. ՚՚: և սոո
րինք, են երկու. որ է ... ՝.
՝՝: և՝ ոչ մարմին է, և ոչ ան
մարմին. այլ և եթ արտաբերա
կան հնչմամբ, է ձայն հիմն: և
գոն անմարմինք 2 վերերեան՝ և
2 ստորին: ՝ի վերինան՝ ՛. և Հ:
և

և յստորին՝ ⌒. և ⌣ ։ ստա-
ցաւ մարմին՝ և անմարմին. զի
որ մարմին է, նա ՚ի վր̄ ասուեց
իբր թէ մարմնաւորի. և որ ան
մարմին, նա՝ իբր թէ ոչ մարմնա
ւորի՝ և ոչ մարմնացուցանէ զա
սութիւն ։ Նաև՝ զձայնս սոցա այս
պէս առ ՚ի միտդ. նախ՝ վերև-
լեացն որ առ [illegible]. և են ութ-
նեքին սոցա որ առ [illegible]. —1.
|1. ⌣1. ⁀1. Կ1. ՚՚1. ՝2.
ɭ4։ իսկ ստորիցն որ առ [illegible]-
[illegible]. և են վեց, որ են՝ [illegible]. ՝1. ՝՝1.
՛2. ,Կ2. ⌒2. ⌣4։ [illegible]
ընդ հանուր խազք վերևլեանք,
յարմար է բաղադրութե̄ առ
ստոր խազիցն սեպհա-
կանութեանց
այսպէս ։



Ահա այսոցիկ նշանօքն խաղիւք
բարձրանայ և ստոր իջանէ երգեց-
մունքն խաղից և սաստութիւք ձայ-
նից և'': Եւ՛ գոն այլ ևս մեծա-
մեծ նշանք խաղից որոց իսկ ան-
ուանքն են թուագրութեան զնոյ մեծամեծ վայ-
ելմանն տեղի գնեն երբ նշան իմն
այլ իմնանս. և են այս այս խաղք
այսոքիկ. իսոլէ՛. բարագլեդի-
դի. դրոմիդիմա. լի՛կիսմա. գի՛լիս-
մա. անդիգենօ՛ գի՛լիսմա. դրոմի-
գօն. ստրեպտօ՛ն. դրոմիգօն սի՛ն-
ակմա. փսեփիստօ՛ն. փսեփիստօ՛ն
սինակմա. կորկօ՛ն. արկօն. ստա-
րօս. անդիգենօմա. օմալօ՛ն. Թէ-
մաղիմօ՛նէսօ. էդէրօսէքսօ.
էբէյերմա. բարադալէսմա. էդէ-
րօն. քսիրօնգլասմա. արկօսի՛ն-
թէտօն. կորկօսինթէտօն. ուր



անիս

ա՛նիւմա · առօ՛տէրմա · թէ՛ոգէ՛
առօ՛Յէս · թէ՛մաաբլա՛ւն · խօ՛ր
էՀմա · չա՛գիմա · փախֆիստօ՛ն
բարագա՛ղէսմա · դրօմիգա՛ն բար
ագա՛ղէսմա · բՅ՛ամա · սՅ՛ամա ·
սՅ՛նակմա · էնարքմիս · վառէա ·
իմի՛ փօնօն · և իմի՛ փթօրօն ։
Գո՛ն այլ ևս նշանք որոց տեղի
ձայնից այլ իմն կերպ դառնալն.
ք, իբր սկզբան ձայնից անյայտ
լինելն · ու զ տալ ՔՐօզա՛ և՛ ։ Ա՛.յլ և՛
առաջնոյ ձայնի մէջն՝ ծանր ձայն
է · երկրորդի մէջն՝ չորրորդի կողմն
ձայնէ և՛ ՟ը՟ կարգի ։ զայսոսիկ
քրս այսպէս գիտելով եկեսցուք և
տեսցուք, թէ զի՛նչ է խաղիցն
ձայնք · և որ՛պէս ինչէ Ճնշմունք
նոցին ։ Նախ՝ ‿ ‿ ‿ ՛փօն.
1· ___ 1· ___ 2· ___ 2· ___ 2·





Մ.Հա՛ 3 ի՛սօնն գոլով 'ի մի կարգ ,
ասի ա՛փօ՛տ , որ է անձայն . և ՚՚
ունի 1 ձայն . և —— գոլով միակ՝
1 ձայն ունի . և ——՝՝ գոլով տիօ
գէնտիմայն 'ի ծայր օլիկօնի , 2
ձայն հանէ . այս ——՝ գոլ 'ի
յեզր , խափանէ սորին ձայնն ,
և ինքն յատուկ 2 ձայնիւն՝ 'ի
կեր արկանի . այս ՚՚ գոլով . 2
գէնտիմայն 'ի վե՛ր այսր—— 2 ձայն
հանէ . և ՝՝ 3 . այս ՝ ես 3 .
և՚՚ այսպէս ըստ կարգի . Օ.սո_
սա ես այսպէս գիտելով տես_
ջուք , թէ ո՞րպիսի կերպիւ է
ձևն մեր հայոցս խազից . որ ա
հա՛նախ իսօնն մեր , է՛ այսու կեր
պիւ — . որ ասի ա՛սու . իբր թէ
ասուն , որ է խօսուն . ր իբր ձայ
նահան և ո՛չ համանգամայն . զի

 ոպ

որպ̄ իսօնն յունաց՝ գոլով կէտն
ուքայ նշ̄, որ վերին կոտուցն քա
ջայայտ ցուցանէ, մերն ևս ե
լով կէտն այբի, որք իբր ա՛ա՛
հնչեցեալ հանդարտօրէն ձայն
արձակելով միշտ անդրադառ_
նան. և ոչ կարեն լրապէս ուքա
կամ այք լինիլ և ձայն հանել իբ
րև զայլսն. այլ՝ որպ̄ նախկին գո
լով գրոցն երկոյունց, համապատող
'ի կէր արկմանն տեղի, ա՛. ե՛.
է՛. ը՛. ի՛. ո՛. օ՛. ու՛. (որք են
ութ և ոչ այլ որպ̄ ասացաւ ութ
աղեայ քնարաւ և'') առնելով
ձայն արձակեն՝ և բաշխեն համ
րից գրոցն ասութեց զձայնս՝ որպ̄
յայտ լինի է նկատողաց: Նաև
թաշտն մեր, կարէ յարմարել
իսօնի, սակայն զօրութ̄ թաշտին,

ո՛չ է նման նմա · այլ՝ այլազան կերպիւ ։ Նաև՝ խազքն հայոցս, Թարգ Թէուէ, է այսպէս ըստ դրեցն կարգի · երկա՛ր · սո՛ւղ · սո՛ւր · Թո՛ւր · ոլորա՛կ · խո՛ւնձ · վերնախաղ · ներքնախաղ · քարքաշ · խոսրովային · ծո՛ւնկ · ծնկներ · բենկո՛րծ · ձակո՛րծ · էկորձ · խո՛ւմ, հուհա՛յ · փա՛Թութ · զա՛րկ · փո՛ւշ · շեշտ · պարո՛յկ · բո՛ւթ · երկբութ · ՚ի սոցանէ ·, ըստ քերթողացն կիր արկման, ողից և երկարից վանկից դնեն, բայց կիրառուցեն մանաւանդ տաղաչափք, ՚ի շարադրութիս երաժշտականս ։ Նմանապէս՝ և կան և ՚ի միջի մերումս մեծ ամեծ խազից նշանք՝ զորս դնեմք ըստ վայելմանն տեղի ա-



սու

սուեց · զո՞ր օրինակ · կխածխա_
թութ · խոխըլի՛ փուշ · շեշտա_
րենկորձ · մեծ ա՛րենկորձ · խըն
ճայրենկորձ · խօսրովանենա ·
խօսրովատիօ · կիսախաւմ ·
թաշտ · շեշտաթաշտ · փշայրեն
կորձ · մերնակէտ · ներքնակէտ ·
մենկո՛րձմ · փշտադարձ · երկողո_
րանկ · շանկո՛րձ շ · ելակէ · իւհէ
ի · պէկո՛րձ պ · եյեէ · զանկորձ
զ · րէյրէ ր · Որքա ըստ ձեւոյ ձայ
նիցն, կարեն ՚ի լրումն հասուցա
նել զոր ինչ ձայնաւոր աստ_
ուածք գտանի · որոց ոմանք եր
կուքն ՚ի մի տեղ եդեալ՝ և զե_
րիսն կամ այլ աւելի և պակաս,
երկարի և սղի երգն աստուա_
ծոց միջնորդութ երաժշտի · զի
սով մինն առնէ · և միւսն կրէ ·



և

և միւսն երևի. որ ահա՛ երա-
ժիշտն առնէ. խաղքն կրէ. և
ստուին տեսանելեաւ երևի. որպ-
էս պորփիւրն, Թէ առնօղն,
առնելին, և առեցեալն: և հա-
մեմատի բաղդատման՝ ասացեալն
'ի պրոկղէ, Թէ ծանօթուն պատ-
ճառացն, է վախճան հանճարոյ՝
և արուեստից. զի յայնժամ ա-
սեմք վերահասու՛ն արհեստից,
յորժամ զպատճառն (ասէ) ծա-
նիցուք զասացուածոցն: Ուրեմն
դիցուք աստէն զօրինակս ամե-
նայայտս տաղից և մեղեդեաց
քանի մի՛ հանդերձ ձայնիւ՛, և
խաղիւք խաղն ընդ յունաց.
յորս անկիրթք իբր վարժեալ
կրթեսցին:

Ձայն առաջերեայ. աջ։

Ուրախ քեզ մարիամ զոր

գաբրիէլ սկզբնաւորեաց

ուրախ ուրախ ուրախ

քեզ մարիամ ուրախ

բանաւոր տաճար եղեր դու

երկնաւոր թագաւորին ուրախ



լեր

լէր ուրախլէր ուրախլէր

կոյս մարիամ ուրախ լէր

Նոր: ձեռաչեւէ. ող.

Այսօր Նոր արև հարեաւ

'ի Նորահրաշ արեգակնէ

'ի Նորահրաշ արեգակնէ այսօր

նոր շուշան ծաղկեալ 'ի նո_

րատունկ բուրաստանէ 'ի նո,

րատունկ բուրաստանէ։

Ողորմեան ձայն Բ։,

Երկինք երկնից իմաց արա_

րէք և երկնայինք դուք խո_

Նաւրհեցէք 'ի բեթլէհէմ 'ի յաւ

րըն ընթացէք զերկնից առ ·

քայն 'ի մսուրն տեսէք որ այսօր

յօ յօ յօ յօ յօ այ յօ այ

յօ յօ յօ յօ յօ յօ յօ յօ

օ օր օր օր օր օր օ օ օր

Եկեալ 'ի կուսէն ծընեալ

մայր անարատ մօրէն մարմ-

նացեալ:

Յարութեան. Գէ.

Կանայք ոմանք եկին 'ի մեծ

 զատ

զատկին յայն շաբաթին մա-

րեամ սողոմէի և ևս ըն-

կեր մագդաղենի ։

Ե.ու գըրացէք և սրբասնեալք

որք ընդ նըմա այլ շրջէին ։

Յարեաւ քրիստոս այսօր աւե
տիս որդւոց սիոնի ընդ իւր յա -
րոյց մեր զնախահայրն զանկեալն
՚ի դրախտէն նաև այլոց զհոգիս
սուրբ հարանց զգերեալսն ՚ի

բանաւէն հաւու ա՜ռար և գերբեաց

հզօրն ՚ի պատերազմէն ցնծաս

ցուք ցնծացուք ով ազատեալք

արեամբ գառինն քանզի երբաց

մեզ ճանապարհ խուրով՝ խաչիւն և



շնոր

շնորհեաց զայն զոր կորոյս հայր

մեր նախկին. և զուարթունք երկ

նից ընդ մեզ երգակցեալ գոչեն

օրհնեալ է ն՞ք յարութիդ գո-

վեալ է ն՞ք յարութիդ.

Ծննդեան. գէ։



ա ան եւ ան խախա ծնո,

ղու ու Թի ի ի րէյ րէյ րէ րէյ

րէ րէյ րէ րէյ րէ րէյ րէ րէյ

րէ րէյ րէ եմկէ եմկէ եմկէ

եմկէ եմկէ եմկէ ե ե ե իւն

Յարեաւ փրկիչն աշխարհի և ա

զատեաց զազգս մարդկան մահ

ուա անէն քրէյ րէյ րէ րէ րէյ

րէ րէ րէ րի րէ րէ րեմվէ րի

րի րէ րի րէ րի րէ րի րէյ րի

րէյ

րէյ րէ րէ րէյ րէ րէյ րէ րէյ րէ

րէ րէյ րէ րէ րէյ րէ րէ րէյ րէ

րէ րէ րէյ րէ րէա տաա։

Յարութեան է։

Լու պա ա ա ա ար տի ի ի ի ի

իղ պան ծա ա այ նէ է է է էր

մա ա ա աըն ն ն ըէ ըն ըէ ըն

ըէ ըէյ ըէ ըէյ ըն ըէ ըէյ ըէյ

ըէյ ըէյ ըէ ըէյ ըէյ ըէ ըէյ ըէ

է էյ ըէմ վէ էյ ըէյ ըէյ ըէյ ըէ"

ըն ըն ըէ ըն ըն ըն ամ մն ն Թէ

դու ու ու քար ձեր զանդ րա-

նիկն իմ ագ է է էր

Յարութեան, ալ։

'ի կոյս վիմէն յարեաւ այսօր

և ըղ գերեալսն 'ի գերողէն

ազա տանեաց քրէյ րէ րէ րէ
րէ




Մ. ծացուն, ձայն է ը՛ր դ՛րրոյն ։

Ոգեւոր որդւոց անձինս ՚ի յայն նայել այսօր ծննդեան եւ Զ...

մարէրէրէրում ։

Իսկ ՚ի հեղմանէ արեան ձե- յօրջէ
ռոյ՝ հոտ անոյշ բուրեաց ՚ի յեր- աձ
կինս. և հաստատեցաւ տէր ՚ի
հոտ անուշից ընդ կամաւոր
պատարագս ձեր. մի ուք
զեն նգեանք։

Նայր մեծանակաւ որ առաքել- հօգ
ցեր ըզմիածին որդիդ ՚ի փըր- դձ
կութի մարդկան. հեր զեր և
զհոգւոյդ պարգևս ։

Ո. լէ փ զի արդ զատատան նստաւ յօւէ
Ենացեան քաղաքն բազմամբո- դկ
ղով. և եղև ՚ի բըրև այրի լը
ց նն տրտմութ ՚ի մէջ հեթանո
սաց. իշխան աշխարհի նեղև
հարկաւու ։

Ո. հա կաւ զլրուե 8 ձայնն, ըստ
յերկրորդն յարմարութէ. զի

անկարելին, կարելի՛ լինի՛ իբր
Թէ ձեռագրով։ այժմ և եթ
ցոյց իմն եղեալ եղև ոպ̃ Թէ
ոչ իրօրէն գծման Թէուէ. այլ՝
ըստ ընտրութեն իրի։ Գիտելի՛ է
և ս, յաղագս ձայնից՝ Թէ ուս-
տի՛ իցեն. և յումմէ գտան. ստե
փաննննոս փիլիսոփայն գոլով
(ասէ) հռչակաւոր երաժիշտ՝
և հմուտ ձայնից, զհանուրս
ձայնս գոյից՝ բաժանեաց 'ի մա-
սունս այս իմչ. որք են բառա-
